ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

20.02.2023 թվականին կնքված N ԵՄ-ԲՄԾՁԲ-23/7-1 գնման պայմանագրի

ք. Երևան «02» 03 2023թ.

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ը ի դեմս գլխավոր տնօրենի ժ/պ՝ Բ. Սեդրակյանի, որը գործում է «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Միկան» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կ. Միքայելյանի, որը գործում է «Միկան» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 20.02.2023թ. կնքված N ԵՄ-ԲՄԾՁԲ-23/7-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.15 կետերը և հաշվի առնելով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման պահանջը և նախատեսվել են ֆինանսական միջոցներ, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

Հետագա համագործակցության և Պայմանագրով նախատեսված աշխատանքների ձեռքբերման համար հատկացված 550,000.00 (հինգ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, առանց ԱԱՀ-ն (Կատարողի հավաստմամբ վերջինս չի հանդիսանում ԱԱՀ վճարող), շրջանակներում գնում կատարելու նպատակով Կողմերը որոշեցին.

1. Պայմանագրի 1-ին պարբերությունը խմբագրել նոր շարադասությամբ հետևյալ կերպ՝ «*«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ը ի դեմս գլխավոր տնօրենի ժ/պ՝ Բ. Սեդրակյանի, որը գործում է «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Միկան» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կ. Միքայելյանի, որը գործում է «Միկան» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին*»:

2. Խմբագրել և հաստատել Պայմանագրի վճարման ժամանակացույցը նոր շարադասությամբ՝ ըստ սույն համաձայնագրի Հավելված 1-ի:

**2. Այլ պայմաններ**

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Կողմերի պատասխանատվության հետ կապված այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի թիվ 1 հավելվածը հանդիսանում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ | «Միկան» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 | ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Գործարանային նրբ. 21 |
| «Ամերիաբանկ» ՓԲԸ | «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ, Կումայրի մ/ճ |
| Հ/Հ 1570083324940100 | Հ/Հ 1570074053580100 |
| ՀՎՀՀ 00000911 | ՀՎՀՀ 05551597 |
| գլխավոր տնօրենի ժ/պ———— Բ. Սեդրակյան | տնօրեն———— Կ. Միքայելյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ. | |

*Հավելված N 1*
*«20» փետրվարի 2023թ. կնքված*
*ԵՄ-ԲՄԾՁԲ-23/7-1 ծածկագրով պայմանագրի*
*«02» 03 2023թ. կնքված*
*թիվ 1 համաձայնագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| | | | Ծառայության | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 71351540/501 | Թեք տանիքի, պատուհանների, դարպասների փոխարինման և հարթ տանիքի մասնակի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ | - | 550000 | 550000 | 550000 | 550000 | 550000 | 550000 | 550000 | 550000 | 550000 | 550000 | 550000 | 550000 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570083324940100
ՀՎՀՀ 00000911

գլխավոր տնօրենի ժ/պ————— Գ. Մեհրաբյան
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«Միկան» ՍՊԸ
ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Գործարանային նրբ. 21
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ, Կումայրի մ/ճ
Հ/Հ 1570074053580100
ՀՎՀՀ 05551597

տնօրեն————— Միքայելյան
/ստորագրություն/
Կ.Տ.